РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ФОНД «ШИРАКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ им. М. НАЛБАНДЯНА»

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE END SPORT

«M. NALBANDYAN STATE UNIVERSITY OF SHIRAK» FOUNDATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

3126, г. Гюмри, ул. П. Севака 4,
тел. (0312)2-71-99

3126, գ. Գյումրի, Պ. Սևակի 4, հեռ. (0312)2-71-99

3126, Gyumri, str. P. Sevak 4,
tel. (0312)2-71-99

E-mail: info@shsu.am www.shsu.am

01-24 № 473

«12» 08 2025թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Ա/Ձ Գոռ Նիկողոսյանին

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան հիմնադրամի (այսուհետ՝ Գնորդ) և Գոռ Նիկողոսյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025թ.-ի հուլիսի 16-ին կնքված **ՇՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-3** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացում մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները:

Նշենք, որ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրը լրանում է օգոստոսի 5-ին:

Օգոստոսի 5-ին էլեկտրոնային եղանակով մասնակցին ուղարկվել է գրություն, որով մասնակցին տրվել է ևս 3 աշխատանքային օր ժամանակ, որպեսզի կատարի Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սկայն մասնակցից որևէ արձագանք չի ստացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան հիմնադրամը հարկադրված է 2025թ.-ի օգոստոսի 11-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 3 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 167925 (հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր քսանհինգ) ՀՀ դրամի և 111950 (հարյուր

տասնմեկ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(«Այ Դի Բանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ, Հ/Հ 11802024816700)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն Գոռ Նիկողոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ե.Սերոբյան

Կատարող Է. Գրիգորյան